

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ
«Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ

Որպես իրավական փաստաթուղթ «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքը բավականին կիրառական էր և հաջողված:

Քանի որ նոր տարբերակով իրավական ակտը պետք է համապատասխանեցվի եվրոպական օրենսգրքի նորմերին, այսինքն պետք է լինի երեխայակենտրոն, չպետք է անտեսել, որ այն պետք է նաև ՀՀ-ում խրախուսի մանկածնությունը: Նշյալ գաղափարին հարիր չէ մինչև երկու տարեկան երեխայի նպաստի իրավունք վերապահել միայն խնամքի արձակուրդում գտնվող մայրերին: Առաջարկվում է մինչև երկու տարեկան երեխայի նպաստ վճարել առանց բացառության բոլոր մայրերին, իսկ աշխատելու կամ չաշխատելու նախապայմանը բացառել, քանի որ մինչև երկու տարեկան երեխայի նպաստը տրվում է երեխայի խնամքն իրականացնելու նպատակով:

Նկատի առնելով այս մոտեցումը առաջարկվում է՝

Հոդված 27-ը վերաշարադրել հետևյալ բովանդակությամբ՝

«Հոդված 27. Մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստի իրավունքը

Մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստ (այսուհետ՝ երեխայի խնամքի նպաստ) ստանալու իրավունք ունի ծնողներից մեկը կամ միակ ծնողը կամ խնամակալը (այսուհետ՝ ծնող)՝ մինչև երեխայի երկու տարեկանը լրանալը:»:

Ելնելով նման մոտեցումից համապատասխան փոփոխություններ կկատարվեն մի շարք հոդվածներում, մասնավորապես՝

կհանվեն Հոդված 28-ի 3-րդ և 7-րդ կետերը, 13-րդ կետի 4-րդ ենթակետը, նույն հոդվածի 5-րդ կետի վերջին պարբերության «... համար՝»-ից հետո շարադրված «ան-կախ գործատուի հրամանում այդ մասին նշված լինելու հանգամանքից» բառերը և այլն:

Երեխայակենտրոն համակարգ ստեղծելու ճանապարհին միանգամայն անընդունելի է Հոդված 28-ի 13-րդ կետի 6-րդ ենթակետը, ըստ որի՝ որպես նպաստի դադարման հիմք է հանդիսանում երեխայի խնամքն իրականացնողի մահը /6) երեխայի կամ խնամքի արձակուրդում գտնվող դիմողի մահվան դեպքերում:/: Նպատակահարմար է վերոշարադրյալ առաջարկությունների ընդունումից հետո այս ենթակետը շարադրել՝ **«6) երեխայի մահվան դեպքում:»:**

Նկատի առնելով, որ Հոդված 17-ի /ընտանեկան նպաստ ստացող/ և Հոդված 21-ի /սոցիալական նպաստ ստացող/ բովանդակությունը նույնն են, ապա դրանք կարելի է միավորել, իսկ «Հոդված 21. Հուղարկավորության միանվագ դրամական օգնության իրավունքը և դրա տրամադրման կարգը» ամբողջ տեքստը հանել:

Հոդված 17-ի 3-րդ կետում առաջարկվում է հստակեցնել Հուղարկավորության միանվագ դրամական օգնություն ստանալու նախապայմանը:

Արդյունքում՝ առաջարկվում է Հոդված 17-ը վերաշարադրել հետևյալ բովանդակությամբ՝

«Հոդված 17. Հուղարկավորության միանվագ դրամական օգնության իրավունքը և դրա տրամադրման կարգը

1. Հուղարկավորության միանվագ դրամական օգնության իրավունք ունի այն ընտանիքը, որի կենսաթոշակառու չհամարվող անդամներից մեկը մահացել է և ունի ընտանեկան նպաստի կամ սոցիալական նպաստի իրավունք:

2. Հուղարկավորության միանվագ դրամական օգնության համար դիմողը կամ ընտանիքի չափահաս անդամներից մեկը, ընտանիքում չափահաս անդամ չլինելու դեպքում՝ անչափահաս անդամի օրինական ներկայացուցիչը, իսկ սոցիալական նպաստ ստացող միայնակ անձի մահվան դեպքում՝ հուղարկավորությունը կազմակերպած անձը, դիմում է իր փաստացի բնակության վայրի տարածքային կենտրոն:

3. Հուղարկավորության միանվագ դրամական օգնությունը նշանակվում է, եթե դիմումը ներկայացվել է մահվան օրվանից հետո՝ վեց ամսվա ընթացքում, և ընտանիքը ընտանիքի անդամի մահանալու ամսվա դրությամբ ունեցել է ընտանեկան կամ սոցիալական նպաստի իրավունք:

4. Հուղարկավորության միանվագ դրամական օգնությունը նշանակվում է ընտանիքի մահացած յուրաքանչյուր անդամի համար:»:

Լրացում՝

Հոդված 10. Ընտանիքների անապահովության գնահատման կարգը

6-րդ մասում՝ «... փոխանակման կարգը» բառերից հետո լրացնել «ինչպես նաև ընտանիքի անապահովության սահմանային միավորը» բառերը:

Խմբագրում՝

Հոդված 10. Ընտանիքների անապահովության գնահատման կարգը

1-ին մասը խմբագրել՝ «1. Ընտանիքի անապահովության աստիճանը գնահատվում է ընտանիքի անապահովության բնութագրիչների (ընտանիքի կազմ, ընտանիքի անդամ(ներ)ի սոցիալական կարգավիճակ, եկամուտ և այլն) հիման վրա:»: